Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **30.12.2025թ. ժամը 11:00**

ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիսին մասնակցում էին մարզի խորհրդի 8 անդամներից 7-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ ՊՆ երկրորդ բանակային կորպուսի հրամանատար Գարեգին Պողոսյանը, ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ Սարգիս Մարգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Գեղարքունիքի մարզային վարչության պետ Սանթուր Դուրգարյանը, ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի մարզային վարչության, ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազության, ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի և Ճամբարակի բաժինների բարձրաստիճան պաշտոնյաներ, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանը, մարզպետի խորհրդականներ Սևակ Խլղաթյանը, Ալբերտ Աղեկյանը և Մանանա Գալստյանը, մարզպետի օգնականներ Երեմ Քարամյանը և Սուրեն Գրիգորյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, մարզային ենթակայության առողջապահական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենները, մարզի համայնքների ղեկավարների տեղակալները և բնակավայրերի վարչական ղեկավարները:

Օրակարգում՝

1. **Գավառի պետական համալսարանում մագիստրոսական նոր կրթական ծրագրի և համալսարանի իրականացրած միջազգային ակադեմիական ծրագրերի վերաբերյալ.**

/Զեկ. Ռուզաննա Հակոբյան- ԳՊՀ ռեկտոր/

2. **Գավառ համայնքի 2025 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ.**

/Զեկ. Գրիգոր Դաշտոյան - Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ/

3. **Մարտունի համայնքի 2025 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ.**

/ Զեկ. Արմեն Շահինյան - Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ/

4. **Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ.**

/Զեկ. Կարեն Մկրտչյան - Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ/

5. **Սևան համայնքի 2025 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ.**

/ Զեկ. Սուրեն Համբարձումյան - Սևան համայնքի ղեկավարի տեղակալ/

6. **Ճամբարակ համայնքի 2025 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ.**

/Զեկ. Ռոբերտ Օհանյան - Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ/

7. **26.12.2025 թվականի դրությամբ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի և ՀՀ պետական բյուջեից ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարների վերաբերյալ.**

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

8. **ՀՀ Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ.**

/Զեկ. Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

9. **Այլ հարցեր:**

<u>Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:</u>

Կարեն Սարգսյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմի և համայնքների կողմից 2025 թվականին արձանագրված արդյունքային ցուցանիշները և շնորհակալություն հայտնեց մարզի համայնքների ղեկավարներին, համայնքապետարանների աշխատակազմերին, մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին, մարզային ենթակայության առողջապահական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին 2025 թվականի ընթացքում իրականացրած աշխատանքների և լավագույն ցուցանիշներ ապահովելու համար՝ առաջարկելով շարունակել աշխատել նույն տեմպով՝ 2026 թվականին առավել լավ արդյունք ապահովելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

09.01.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ